



հայաստան համահայկական հիմնադրամ
The Armenia Fund



ԳՅՈՒՂԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
Rural Development Program

ԱՄՍԱԹԻՎ.
ՈՒՄ ԿՈՂՄԻՑ.

ԽՈՐԱԳԻՐ.

Մարտի 28, 2008 թ.
Գյուղական զարգացման ծրագրի
գրասենյակ
«Հայաստան» համահայկական հիմնադրամի
Գյուղական զարգացման ծրագրի շաբաթական
գեկույց

Եթե ցանկանանք այս շաբաթվա համար ինչ որ անվանում որոշել այն անշուշտ կկոչենք փոքր ծրագրերի շաբաթ, քանզի այս շաբաթվա ընթացքում է զուգահեռաբար իրականացվել երեք փոքր ծրագիր: Այս ծրագրերի իրականացման մանրամասներին կարող եք ծանոթանալ հակիրճ նորությունների բաժնում: Խոսելու ենք նաեւ համայնքներում իրականացվող մշակույթային ծրագրերի մասին եւ թե դուք ինչպես եք կարող ձեր ներդրումը ունենալ այս ծրագրերի իրականացմանը առաջարկելով նոր գաղափարներ եւ նոր հորիզոններ բացելով սահմանամերձ համայնքների երեխաների համար: Այս շաբաթվա տեսանյութով մենք ձեզնից խնդրում ենք պատասխանել մի պարզ հարցի. արդյո՞ք նրանք արժանի են:

Այլ նորությունները հակիրճ՝

- Կաթնարտադրության զարգացման ծրագրի շրջանակներում այս շաբաթվա ընթացքում իրականացվեցին երկու փոքր ծրագրեր: Այս նախաձեռնության համաձայն Սյունիքի մարզի Գորայքի եւ Շիրակի մարզի Սիզավետ սահմանամերձ համայնքների երկու ֆերմերներ կստանան ավտոմատ կթի ագրեգատներ: Ծրագիրը իրականացվել է Հայաստանի Կաթնարտադրության Չարգացման Ասոցիացիայի հետ համատեղ: Այս ծրագիրը հանդիսանում է ավելի մեծ նախաձեռնության բաղկացուցիչ մաս, որի նպատակն է կաթնարտադրության զարգացումը սահմանամերձ համայնքներում: Այս ծրագրի մեկ այլ բաղադրամաս է հանդիսանում կաթի հավաքման կետի հիմնումը Խաշթառակի միկրոշրջանի Ազատամուտ համայնքում:
- Այս շաբաթվա ընթացքում կյանքի կոչված երրորդ փոքր ծրագիրը իրականացվելու է հենց Ազատամուտ համայնքում: Ծրագրի շրջանակներում համայնքի նոր վերանորոգված գրադարանը կստանա հեռուստացույց եւ DVD նվազարկիչ, ինչպես նաեւ տարբեր կրթական եւ ժամանցային DVD սկավառակներ: Մենք հույսով ենք, որ այս ծրագրով գրադարանը կվերահաստատի իր տեղը Ազատամուտ համայնքի բնակիչների կյանքում, որպես հետաքրքիր ժամանցի վայր: Այս ծրագիրը



իրականացվել է տիկին Շաքե Հավանի շնորհիվ, որը եւ մեզ տվեց ստորել ներկայացված հոդվածի գաղափարը:

Մասնակցության կոչ

Դպրոցների վերանորոգման, գազիֆիկացման, ճանապարհների վերականգնման եւ ջրամատակարարման համակարգերի նորոգման ծրագրերը համդիսանում են յուրաքանչյուր զարգացման ծրագրի հիմնական բաղկացուցիչ մասերը: Այս ծրագրերի նպատակն է հոգալ բնակիչների հիմնական պահանջները, ուստի ենթակառուցվածքների վերականգնման ծրագրերը հանդիսանում են «Հայաստան» համահայկական հիմնադրամի Գյուղական զարգացման ծրագրի հիմնաքարերից մեկը:

Ծրագրի մյուս հիմնաքարը տնտեսական զարգացման նախաձեռնությունն է, որը նպատակ ունի մեծացնել սահմանամերձ համայնքների տնտեսական ներուժը եւ օգնել մարդկանց ստանալ կայուն եւ հուսալի աշխատավարձ: Այսպիսով մարդիկ կունենան հիմնական ենթակառուցվածքները ինչպես նաեւ նոր ֆինանսական հնարավորություններ: Սակայն արդյո՞ք սա լուծելու է սահմանամերձ համայնքների խնդիրները: Այս դեպքում մեր պատասխանը լինելու է ոչ, քանի որ այստեղ պակասում է մշակութային բաղադրամասը:



Իրականությունը այն է, որ առանց մշակութային խթանի եւ համայնքի հետ մշակութային կապի, ինչպես նաեւ համայնքում բնակիչների համար ժամանցային հնարավորությունների բացակայության պայմաններում բոլոր ենթակառուցվածքների վերականգնման եւ տնտեսական զարգացման ծրագրերը անօգուտ են դառնում: Ուրիշ տեղ միշտ կարելի է գտնել ավելի լավ ճանապարհներ կամ ավելի բարձր աշխատավարձ եւ եթե մարդը իր համայնքի նկատմամբ մշակութային կապվածություն չի զգում ոչինչ չի կարող խանգարել իրեն լքելու գյուղը: Իսկ մենք ի՞նչ ենք կարող անել: Նախ եւ առաջ մենք չենք կարող ներմուծել մշակույթը: մենք պետք է գնահատենք յուրաքանչյուր համայնքի յուրահատկությունները եւ օգնենք նրանց բացահայտել տեղի բնակիչների ներուժը:

Բնակիչները սրա կարիքն ունեն նույնքան, որքան ունեն խմելու ջրի բարվոք



համակարգի, կամ վերանորոգված ճանապարհների կարիքը: Օրինակ՝ Խաշթառակի համայնքի գրադարանավարը կազմակերպել է աշակերտների թատրոնի խումբ, որը սակայն համապատասխան վայրի բացակայության պատճառով (մշակույթի տունը անմխիթար վիճակում է), հավաքները իրականացնում է իր տանը: Ներկայացումները քիչ եւ մեծ ընդմիջումներով են բեմադրվում, բայց միշտ մեծ թվով հանդիսատես են հավաքվում:

Ազատամուտ համայնքը ունի արվեստի խմբակ, որտեղ ամեն օր ավելի քան հիսուն աշակերտներ են հավաքվում նկարչության դասընթացների համար, չնայած նկարչության պիտույքների սահմանափակ քանակին: Երեխաները նաեւ չունեն մասնագետ ուսուցիչ, որը նրանց կուղղորդեր իրենց ընդունակությունների զարգացման ճանապարհին: Մենք ներկայումս բանակցում ենք մի շարք արվեստագետների հետ, որոնք պատրաստակամություն են հայտնել արվեստի դասընթացներ անցկացնել Ազատամուտի աշակերտների հետ: Մենք այս քայլը դիտում ենք որպես փորձնական ծրագիր, որի հաջողության դեպքում այն ընդգրկելու է Հայաստանի բոլոր սահմանամերձ համայնքները:

Դուք ի՞նչ եք կարող անել: Եթե դուք նկարիչ եք, քանդակագործ կամ այլ արվեստի մասնագետ եւ ցանկանում եք ձեր գիտելիքները փոխանցել սահմանամերձ համայնքների բնակիչներին, եթե ցանկանում եք ձեր ներդրումը ունենալ նոր գաղափարների ներկայացմամբ, օգնելով մարդկանց հայտնաբերել եւ զարգացնել իրենց ընդունակությունները, ձեր գործելու ժամանակն է: Խնդրում ենք կապվել մեզ հետ եւ հենց այսօր օգնել բարեփոխել սահմանամերձ համայնքների բնակիչների կյանքը:

